Ավետիք Իսահակյան

Միամանթոյին, 1914թ . , ապրիլի 21, Քեռլին

Սիրելի Սիամանթո.
Վաղուց է, կուզեի քեզ երկարորեն գրել, բայց գլուխս շատ զբաղված էր և օրեցօր կգցեի. Անշուշտ, վիրավորված չես լինիր, թեև իրավունք ունիս:
Շատ զբաղված եմ, սիրելիս. – հազիվ բնակարան վարձեցի, կահավորել, ընկնել այս ու այն կողմ, և խմբագրական գործերը. - ուղղակի հոգնած եմ:
Ամենից առաջ, խնդրում եմ, քանի այդտեղ ես, մի բանաստեղծություն ուղարկիր, ոչ այս համարի համար, այլ երկրորդ համարի, որ լույս պիտի տեսնի հունիսին: Առաջին թվի համար չէ, քանի որ գերմաներեն առաջին թվի մեջ թարգմանորեն դնելու ենք բո «Հայրենի աղբյուրը»: Ուրեմն, ժամանակ ունիս գրելու:
բ. Խնդրում եմ անհապաղ ուղարկես օր. Մաննիկի հասցեն, մեկ, որ պիտի նյութ խնդրեմ նրանից, երկրորդ, որ քանի Բեպին եմ, ոչ մի լուր չունեմ. նամակ գրեմ, քեֆն հարցնեմ:
գ. Ուղարկիր նույնպես Ռ. Սևակի հասցեն (Ռ. Չիլինգարյան, Լոզան, դոկտոր), նյութ եմ խնդրելու, նույնպես:
Դուն ի՞նչ վիճակի մեջ ես. սկսեցի՞ր Սիմեոնի մասին գրելիքդ գրել. իսկ Մաննիկի հետ ինչ հոգեկան աստիճանի վրա ես. նամակներ կգրե՞, հա՞շտ եք, ի՞նչ կա. ինչպե՞ս Է նրա առողջությունը, դուն ե՞րբ ես Փարիզ գնալու, կամ ե՞րբ ես Պոլիս գնալու:
Տնտեսական վիճակդ ինչպե՞ս Է:
Լիպարիտը հազիվ մի քա՛նի օրինակ Է ծախել «Սուրբ ՄեսրոբԷն». կաշխատեմ ես էլ ծախել:
Ուրիշ ինչպե՞ս է անցնում ժամանակդ: Երևի հիմա այդտեղ կատարյալ գարուն է, և շրջելու - մանգալու կերթաք միշտ. ես դեռ քաղաքից ոտքս դուրս չեմ դրել, և

նույնիսկ քաղաքը չեմ տեսել. իմ գործը չէր բնավ պաշտոն, գործ ստանձնելը, բայց անգործ մնալ էլ չի լինիր. երեխա ունեմ, միջոցներ շա՜տ են հարկավոր: Խնդրում եմ շուտով պատասխանես. Գարոյի, Նեվրուզի մասին. ի՞նչ կընեն. հաճա՞խ կլինիս տիկ. Թումանի մոտ. ի՛նչ կընե տ. Անտոնը:
Երեխաս անունս տալի՞ս է, թե՞ մոռացել է:
Ջերմ բարևներս հաղորդիր տ. Անտոնին, տիկ. Թումանային, Գարոյին, Նեվրուզին և ուրիշներին:

Համբույրներով,
քո՝ Ավետիք
<Հ. Գ.> Պարզ գրիր Մաննիկի և Սևակի հասցեները: Իմ հասցեն գիտես, կամ կնոջս մոտից վերցրու: